

Լ. ԹԱՐԳՅՈՒԼ



ՅԵՐԿՈՒ ՄԱՅՐ

891.995

Թ-33

ՊԵՏԶՐԱՏ

891.99 ԼՐ
Բ-93

ԼՅՈՒՍԻ ԹԱՐԳՅՈՒԼ

30 MAY 2011

ՅԵՐԿՈՒ ՄԱՅՐ

ՆԿԱՐՆԵՐԸ
ԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ Ի



ՊԵՏՆԱՐԱՆ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1939

18 APR 2013

Խմբագիր՝ Հ. Հայրապետյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբազրիչ՝ Գար. Հակոբյան

8667

ЛЮСИ ТАРГЮЛЬ
ДВЕ МАТЕРИ

Гиз Арм. ССР, Ереван, 1939



34269-62

Կլավկինի լիազոր՝ Վ. 2009 Հրատ. № 4871

Պատվեր 318. Տիրաժ. 3000.

Թուղթ 62X94 Տպագր. 1 մամ.

Մեկ մամ. 21332 նշան.

Հանձնված է արտագրության 31 մարտի 1939 թ

Ստորագրված է տպագրության համար 29 ապրիլի 1939 թ.

Պետհրատի 1 տպարան, Յերևան, Լենինի 65



1

Ամեն գարնան մեր գյուղի բարգիւնների վրա կափկա-
փելով իջնում ելին արագիւնները՝ յերկար տոտիկ, բարակ
վզիկ, կտուցը սուր, սպիտակ փետուր արագիւնները:

Նրանք մեզ մոտ գալիս էին հեռու-հեռու յերկը-
րներից, վորովհետև սիրում էին տաք արև, շաղկի գորտեր,
լորտու, մողես, ձկնիկներ:

Յեվ արագիւնների գալուց առաջ, ձմռան կիսին, վեր-
ջանում էր մեր հացի պաշարը, պակասում վառելիքը, հի-
վանդանում էր Նազո քույրիկս... Մայրս հուսահատությու-
նից հազիվ էր պտտանցնում ճախարակը: Նազոն կաթ էր
ուզում, մեր խատուտիկ այծի կաթը, մինչդեռ այծը տարել
էր քոխվան՝ յերկու ուղբլի պարտքի փոխարեն:

Տառտ, փխիկի հետ սառն թոնրին կծկված, հարց-
նում էր անհամբեր:

— Լուսինն բալա, հլա շատ կա, վոր արագիւնները յետ
դառնան:

— Մնացել ե յերկու ամիս, տատի ջան, ընդամենը
յերկու ամիս,—պատասխանում եյի յես, ըստ հնարավո-
րության մեղմացնելով յերկու թիվը:

Արագիլի վերադարձը համարվում եր գարնան նշան:
Ուստի, հենց վոր կապույտ յերկնքում յերևում եր նրանց
պայծառ յերամբ, յես փոփոխված վազում եյի տատիս մոտ
և, նրա ձեռներիցը բռնած, բակը հանում:

«Հէյ արագիլ, բարով յեկար,
Չան արագիլ, բարով յեկար,
Յոթ սարերով, ծովով յեկար,
Արևի հետ, ծաղկով յեկար»:

Յերգում եյինք յերկուսով:

Թեև գարնան գալն առանձնապես չեր թեթևացնում
մեր վիճակը, սակայն մեր տրամադրությունը բարձրաց-
նում եր:

Տատս, կուսցած մեջքն արևին տված, իր մաշված
գոգնոցից ինձ համար «նոր» շոր եր կարում: Աշխուժացած
փխիկը խաղում եր թելի կծիկի հետ: Յես, կողովը շալա-
կած, վազում եյի նախրի յետեվից, թրիք հավաքելու: Թը-
րիքը շաղախելով թխում եյի պատին, վոր չորանա, ձմեռվա
համար վառելիք դառնա, վոր ել չսառչեր իմ տատիկը,
վոր ել չմոմար իմ փխիկը...

Հետո ել գնում եյի դաշտ, բանջար բերելու: Բանջարը
և՛ մեր ճաշն եր, և՛ նախաճաշը, և՛ ընթրիքը: Տատիս լնդերը
չեյին կարողանում տրորել: Մայրս սինձը խաշում եր նրա
համար ու նորից անցնում աշխատանքի:

Նա և՛ մանում եր, և՛ յերգում:

«Մանիլ, մանիլ իմ ճախարակ,
Մանիլ սպիտակ մալանչներ,
Մանիլ թելեր հասա ու բարակ,
Վոր յես հոգամ իմ ցավեր»:



Իսկ ցավերը շատ եյին...

Նա ուզում եր թել մանելով վճարել քյոխվային ու յետ բերել նախշուն այծը, մինչդեռ քյոխվանայծը տալու փոխարեն, տարավ և մորս ճախարակը՝ յերկու ուռքի պարտքի տոկոսի գիմաց...

Այդ որը մայրիկս ինչքան-ինչքան լաց յեղավ...

Իսկ տատիկը սրտի ցավից տուն չեկավ...

Ու... ինչ դաճն որեր եյին...

Ներեցեք, վոր խառնում եմ հուշերս. ախր յես ուզում եյի պատմել արագիւնների մասին:

Յես հաճախ պառկում եյի բարդու շվաքին և յերկար զիտում այդ յերկարավից, հսկա թռչուններին: Նրանք մոտակա ճահճից կտուց-կտուց յեղեղ եյին բերում, կարկառում հին բունը, ապա բանալով իրենց լսյն-լսյն թևերը, ճախում եյին արևի տակ:

— Կափ-կափ-կափ:

Յես նախանձում եյի նրանց:

Ինչո՞ւ յես ել պիտի թևեր չունենայի, վոր թռչեյի նրանց պես հեռու, տեսնեյի, թե ինչ կա մեր գյուղից դուրս, մեր կիսավեր անակից դուրս: Կամ, ինչո՞ւ պիտի իմ մարմինն ել ծածկված չլիներ փետուրներով, վոր լաթեր չհագնեյի: Մինչև չե՞րք հարուստի աղջիկները ծաղրեյին ինձ:

— Յնւ-յնւ-յնւ, աղքատ Լուսուն, աղքատ Լուսուն...

Իսկ յերբ մայր արագիւր թուխս եր նստում, ձտեր հանում և հայր արագիւր ճահճից գորտ, ձուկ եր բերում նրանց համար, այս անգամ յես նախանձում եյի ձուտիկներին: Ինչո՞ւ պիտի յես ել նրանց պես հալը չունենայի, վոր կեր բերեր մեզ համար, վոր իմ խեղճ մայրիկը միշտ մենակ, ախուր չլիներ, վոր իմ կծկված տատիկը, հորս հիշելով, արցունք չթափեր:

Յես հորս չեմ տեսել. նա վաղո՞ւց-վաղո՞ւց ե մե-

ռել: Նրան սարում հոշոտել եյին գայլերը: Քյոխվայի հոտաղն ե յեղել նա:

Արագիւրի ձտերը հեազհետե մեծանում եյին. դեղին աղվամազի փոխարեն նրանց մարմինը ծածկվում եր սպիտակ փետուրներով: Յե՞վ մի որ ել, տեսար, ծնողները նրանց թռչել են սովորեցնում: Նրանք կանգնում եյին բնի յեղրին. ծափ-ծափ անում թևերով: Ձուտիկները, վզները ճկած, առաջանում եյին, սակայն վախից անմիջապես յետ եյին քաշվում:

Խորամանկ մայրն այդ նկատելով, արագ սլանում եր դետափ, վորսում գորտ, կամ ձկնիկ և կտուցումը բռնած՝ ճախում բնի չորս կողմը:

Ձուտիկները մոր բերանում կեր տեսնելով՝ ճվճվալեն բացում եյին կտուցները, բայց մայրը զիտմամբ չեր մոտենում, այլ նստում եր զիմացի ծառին և ախպես պահում կտուցը, վոր ձկնիկը լավ յերեվա:

— Կափ-կափ-կափ. — ձայնում եր հալը բնից շարունակ դեպի մայր արագիւն ու յետ թռչելով:

Նա կարծես բացատրում եր.

— Այ, այսպես, լսյն բացեք թևերդ և ինձ հետ թուք մայրիկի մոտ: Դե հապա... հապա:

Ձուտիկները շարժում եյին թևերը: Մայրն իսկույն մոտակա ծառից դեմ եր անում կտուցը: Ձուտիկները, սոված լինելու պատճառով փտանգը մոռացած, բունը թողած՝ կախվում եյին մոտակա ճյուղից:

Ծնողները ձուտիկների առաջին թռիչքից վողկորված թռչում եյին ուրիշ ծառ: Ձուտիկներն այս անգամ ճյուղից-ճյուղ տեղափոխվում եյին ավելի համարձակ: Ծնողներն, այդ որը յերջանկութունից առատ եյին կերակրում նրանց:

Ու չանցած մի շաբաթ, ամբողջ ընտանիքով ճախում եյին կապույտ յերկնքում: Նրանց գլխավերևում արևն եր, իսկ վոտների տակ՝ կանաչ անտառը:

Ողբ թնդում եր նրանց փայտածայն յերգից.

— Կնփ-կնփ-կնփ:

Անցնում եյին որերը: Դեղնում եյին տերևները: Փր-
չում եր բոթաբեր քամին: Արագիլները խմբվում եյին
յերամ-յերամ և հեռանում մեր յերկրից:

Յես ու տառա տխուր յերգում եյինք.

«Կնփ-կնփ-կնփ-կնփան,

Արագիլները թռան,

Նրանց սև-սև թևի հետ

Յեկնվ աշուն մեր դռան»:

Աշուն...

Մայրս հառաչելով ելի սկսում եր կարկատել մեր
«տաք» շորերը: Կծկված տառա տանից ել չեր դուրս գալիս:
Փխիկիս աչքերը կորցնում եյին իրենց փայլը: Մռայլ ամ-
պերը ծածկում եյին արևը:

Յո՛ւրա եր: Տխն՛ւր եր: Անձրե՛:

2

Մի ձմեռ սոսկալի սառնամանիք յեղավ: Իմ հավաքած
աթարի պաշարը մի ամիս ել չբավեց: Մայրս վորոշեց կտրել
բակի կիսաչոր բարդին, վորի վրա գտնվում եր արագիլի
թափուր բունը:

Տառա չթողեց:

— Ինչպե՛ս կարելի յե, վորդի,—ասում եր նա,—յեթե
արագիլներն իրենց բունը շինում են մարդկանց տան մոտ,
ասել ե, թե վստահում են մեզ, իսկ յես վեր կենամ ու
կտրե՛մ:

Յեվ այնուհետե, ինչքան սաստկանում եր ցուրտը,
տառա այնքան աշխատում եր կտրիչ յերեվար, վոր իբր
թե չի մըսում:

— Դու ել ասա, վոր չես մըսում,—համոզում եր ինձ,—
ասա, վոր գարնանը քեզ համար ելի «մոր» շոր կարեմ, հենց

վոր արագիլները դան. կկարեմ. ուզու՞մ ես, հենց հիմի
կարեմ:

— Լավ, հետո, հետո կկարես,—դիտմամբ պատասխա-
նում եյի յես, համոզված լինելով, վոր այդ բոլորը նա խոս-
տանում եր միմիայն թռչունների բունն ազատելու համար:

Ն՛խ, տատիկ, տատիկ...

Վերջապես սառնամանիքը թուլացավ. արևի տաք
ժպտից ձյունը լաց յեղավ: Գլուխը բարձրացրեց առաջին
ծաղիկը՝ ճնճաղիկը, ապա խոտերը յելան կանաչ-կանաչ
ու մի որ ել լավեց վերագարձող արագիլների ձայնը:

Յես ու տառա իրար գրկած դուրս նետվեցինք:

Արագիլները մոտեցան, ցածրացան, ճուղավորվեցին
գլուղի վրա: Իջան զանգակատան արագիլները, հարեա-
նենց արագիլները:

Ահա և՛ մեր արագիլները:

Տառա հուզումից արտասվեց:

— Բարձր յեկաք, հազմր-հազմր բարով յեկաք,—դիմա-
վորեց նա բազկատարած:

Նրան դեռ տանջում եր այն միտքը, թե ինչ կլինե՞ր
թռչունների գրությունը, յեթե կիսաչոր բարդին կտրեյինք:

3

Մայր արագիլն ելի ձու տծեց, թուխս նստեց. իսկ հայր
արագիլը թխսկանին կերակրելով եր զբաղված: Նա մոդես
եր բերում, կտուցով ջուր, վորպեսզի վեր չկենար թըխս-
կանը, չսառչեյին ձվերը:

Իսկ յերբ յելան ձտերը, արագիլներն սկսեցին իրենց
խնամքը: Յերբ ուժեղ քամի յեր բարձրանում, նրանք
պահապան եյին կանգնում բնի յեղրին, վոր ցած չընկ-
նեն ձտերը: Յերբ անձրև եր գալիս, նրանք վրանի պես
փռում եյին իրենց թեկերը, վոր չթըվեն ձտերը:

Յերեկոները, յերբ հովն ուրորում եր բարդու սաղարթ-

ները, ճտերը մուշ-մուշ քնում էյին ճոճվող բնում, իսկ ծնողները մի-մի վտտի վրա կանգնած՝ յերազում էյին, վոր ես ե, կմեծանան բալիկները, նրանց ել թռչել կսովորեցնեն, ինչպես նախորդներին, և յերբ փչի աշնան ցուրտը, կհավաքվեն յերամ-յերամ ու կչվեն Յեզիպտոս:

Այդ այն գարունն էր, յերբ քյոխվան տարավ մորս ճախարակը յերկու ուռբլի պարտքի տոկոսի դիմաց:

Այդ այն գարունն էր, յերբ ծաղկել էյին անթիվ վարդեր, իսկ անկողնում հեկեկում էր մեր Նազոն... Մայրս ման էր գալիս արցունքից կարմրած աչքերով:

— Կմեռնի իմ ձագուկը, իմ քաղցած հիվանդիկը:

Տատս թեև մխիթարում էր նրան, բայց ինքն էլ էր լալիս:

Քյոխվայի տղան, վոր սովորում էր քաղաքում, յեկել էր արձակուրդ: Նա սիրում էր ծառ բարձրանալ, քանդել թռչունների բները, իսկ ճտերի վիզը քաշել ու իր շանը նետել:

Մի որ ասացի:

— Ինչո՞ւ լես այդպես անում, չե՞ վոր մեղք են ճտերը, մեղք են նրանց մայրերը:

Նա խրոխտ սպառնաց.

— Շատ վոր խոսես, քեզ ել արնաթավալ կանեմ:

— Ինչո՞ւ, դու ո՞վ ես վոր...

— Յես քյոխվայի տղեն եմ, — հպարտ շեշտեց նա, ու նայելով կարկատած շորերիս, շանը քրս-քրս տվեց ինձ վրա:

— Բռնի, Զարգանդ, բռնի եզ աղքատի լակոտին:

Շունն ատամները կրճտացնելով հարձակվեց ինձ վրա: Ծիչս լսելով՝ շնչակտուր հասավ մայրս, ինձ հագիվ աղատեց:

Յես վախեցած հեկեկում էյի, իսկ մայրս դառնացած խրատներ էր տալիս:



— Դու ռվ ես, վոր համարձակվես հարստի տղին նը-
կատողություն անել: Հարուստներին, բայա, ամեն ինչ
կարելի յե. նրանց վրա ձեռք բարձրացնել չես կարող:

Ու ծանր հառաչեց:

Մի որ հայր ու մայր արագիւնները թռել ելին ճահիճ,
ճուտիկները բնի յեղբին կանգնած, կերի ելին սպասում:

Մեկ ել տեսնեմ քոխվայի տղան բարձրացավ կտուրը,
նետ-աղեղով նշան բռնեց մեր ճտերին:

Չնայած մայրս պտուղիբել եր, վոր չի կարելի հարստի
տղայի վրա ձեռք բարձրացնել, բայց յես զայրուլթից քոխ-
վայի տղային մի մեծ քար նետեցի:

Քարը չդիպավ նրան, բայց նրա նետը դիպավ արա-
գիլի ճուտիկին... Ճուտը ճչաց և թալրտալով վայր ընկավ:
Կոտրվել ելին նրա բարակիկ վոտները:

4

... Իսկ կիսավեր տնակում մահանում եր մեր Նազոն:
Տառս ու մայրս իրար կողքի կծկված, խեղդվում
եյին փղձկոցից:

— Հուսո՛ւն, ինչո՛ւ արագիլի ճուտն ենպես ճչաց, — հարցո-
րեց Նազոն, — գլուխն հագիվհազ բարձրացնելով:

Յես անխոս ցած դրի վիրավոր ճուտիկին. նա չըկա-
րողացավ կանգնել, խղճալի նվաց:

Ու մեր խարխուլ սենյակում տիրեց ճնշված լուռթյուն:

Նազոյի փոս ընկած աչքերից արցունքներ հորդեցին:
մայրս կախեց գլուխը, մինչդեռ տառս, կծկված, սլառավ
տառս, զարմանալի արագութեամբ վեր թռավ, գրկելով
թալրտացող ճուտիկին, յերեսը դարձրեց քոխվայի տան
կողմը և մորմոքված անիծեց.

— Խեղ չտեսնե՞ք ձեր արևից, խեղ չտեսնե՞ք... Հերը
թուռնիկիս վիզը կոտրեց, տարավ մեր այժն ու ճախարակը,
տղեն անմեղ ճախ արջունը թափեց, ծնող արագիւնների սիր-



տը սկսեցին: Աստված, յեթե կաս, բա ինչի՞ եղ անորեն-
ների դատը չես կտրուում: Հը՞, աստված, յեթե կաս...

Ու գայրույթից չորացած բռունցքները խփելով չորա-
ցած կրճերին, նորից անիծեց:

Յես յերբեք տատիկիս չեյի տեսել այդպես անարկու:

Յեվ դրանից հետո, ինչքան վերհիշում եմ մեռած-
դնացած տատիկիս, միշտ պատկերացնում եմ են որվա տա-
տիս, յերբ նա անդուսպ բողոքում եր և՛ աստծո՞ դեմ և՛
հարստի դեմ:

— Լուսոն, ճուտիկին կեր տուր, իմ բարձի տակ
հացի փշուր կա,— թոթովեց մահացող Նազոն.

Հացի փշուր...

Ճուտը չկերավ: Նա դեռ այնքան փոքր եր, վոր կա-
րողանում եր միայն մոր կտուցից սնվել:

— Բերանովդ տուր,— խնդրեց Նազոն,— թե չե կմեռնի
քաղցից:

Ճուտը դարձյալ չկերավ:

— Դուրս տար դրան,— շնչաց մայրս, ու խոսքը
չվերջացրած, դառն հեկեկաց:

Յես շտապ դուրս յելա:

5

— Կնի-կնի-կնի:

Այդ մեր արագիլներն եյին վերադառնում: Յերկինքն
ամպել եր, նրանք բուն ելին շտապում, վոր չլինի թե
անձրև գա, ճտերին թրջի:

Նրանք հանդարտ թռչում եյին, յերբ հանկարծ, իրենց
բալիկին ձեռքումս տեսնելով, անագին բարձրությունից
գնդակի պես ցած նետվեցին:

Նրանց արտակարգ ճշի վրա լուսեյապես հավաքվե-
ցին տանջակ արագիլներ, չրջապատեցին վիրավոր ճու-
տիկին:

Ճուտիկը, ծնողներին տեսնելով, աշխուժացավ, կոտրը-
ված վոտներով առաջ նետվեց: Նա մեկ գլորվում եր,
մեկ ճվճվալով նորից վազում: Արագիլները քնքշությամբ
քսքսվում եյին նրան, կարծես ասում.

— Թեքդ բաց. ա՜նյ, այսպես, թուր մեզ հետ,
քեզ բուն տանենք:

Ճուտիկը խրախուսված շարժում եր անվարժ թևիկ-
ները, բայց չեր կարողանում գետնիցը բարձրանալ:

Արագիլները ձեռք չունեյին, վոր ընկած ճուտիկին
հետները տանեյին, ուստի սրտամաշ ձայներ ելին հանում.
լաց եյին լինում:

Քյոխվայի տղա, վոճրագործ տղա...

Հետգհետե մոայլվում եր յերկինքը. վորոտում ելին
ամպերը, կայծակը խփում եր յերկնքից գետին, անտառում
շանթահարվում ելին ծառերը:

Մյուս արագիլները, իրենց ճուտիկներին հիշելով,
թուան իրենց բները:

— Լուսոն բալա, անձրևի տակից վերցրու դրան,
մեղք ե,— ձայնեց տատս:

Յես կռացա ճուտիկին բարձրացնելու, յերբ հայր ու մայր
արագիլները նիզակի պես դեպ ինձ պարզեցին իրենց սուր
կտուցները:

Բնում մնացած ճուտիկը ճվճվում եր սովից: Ծնողները
կարծես նոր մտաբերեցին նրան: Հայր արագիլը թռավ նրա
մոտ, իսկ մայրը ճահիճ սուրաց, չնայած արհավիրքին:

6

Մռայլ եր մեր տնակում: Զիթի ճրագը հագիվ եր
լուսավորում Նազոյին: Նա արդեն շնչում եր ընդհա-
տու մներով: Մայրս ու տատս չոքել ելին նրա գլխավերևը:

Յես ճուտիկին տեղավորեցի ցախի կողովի մեջ, մոտե-
ցա քրոջս:

Նա նախեց ինձ, բայց չճանաչեց: Աչքերին մշուշ եր
խշել...

Յեսխեղբիւս եյի: Տնակում ասես ող չկար շնչելու:
Մեկ եւ հանկարծ ինչ-վոր բան քարի նման զարնվեց
մեր դռանը:

Մենք սարսափած վեր թռանք:

Մայր արագիւն եր... Նա համոզված եր, վոր ճուտիկին
յես վերցրած կլինեմ. կեր եր բերել նրա համար:

Տատս դուռը բացեց: Արագիւր ներս մտաւ, թևերի
տակն առավ ճուտիկին:

7

... Ու այդ գիշեր մեռան Նազոն և ճուտիկը...


8

Նազոյին թաղեցինք մոտակա գերեզմանոցում, իսկ
ճուտիկին՝ բարդու տակ:

Անուհետև հաճախ տեսնում եյի, թե ինչպես մայրս,
Նազոյի ցնցոտիները գրկած, հեկեկում եր անմխիթար,
իսկ արագիւ մայրիկը, ճուտիկի մոտ կանգնած, դառն ձախ-
ներ եր հանում:

9

Հաջորդ գարնանը մեր արագիւներն այլևս չվերա-
դարձան:



ՀՀ Ազգային գրադարան



NL0399519

ԳԻՆԸ 80 Կ.

400

8667